# ԲՅՈՒԼԵՏԵՆ

**Մարտ 2026թ.**

## ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Մարտին գումարվել է Պալատի խորհրդի 5 նիստ՝ 10.03.2026թ.-ին, 17.03. 2026թ.-ին, 23.03.2026թ.-ին, 26.03.2026թ.-ին և 31.03.2026թ.-ին:

**10.03.2026թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 5 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի փորձագետ հաշվապահ անդամի անդամակցությունը դադարեցնելու, Պալատի հանձնաժողովների 2025թ. տարեկան գործունեության հաշվետվությունները հաստատելու մասին որոշումները:

**17.03.2026թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 3 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի հարկային և իրավական այլ հարցերի, որակավորման հանձնաժողովների 2025թ. տարեկան գործունեության հաշվետվությունները, նախնական քննարկվեցին օրենքների փոփոխությունների՝ շրջանառության մեջ դրված նախագծերի փաթեթը, ինչպես նաև քննությունների կազմակերպման գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկությունները:

**23.03.2026թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 1 հարց: Նիստի ընթացքում քննարկվեց Պալատի անդամների արձագանքը «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերի վերաբերյալ, որի արդյունքում ձևավորված դիրքորոշումը որոշվեց ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

**26.03.2026թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 9 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի փորձագետ հաշվապահ անդամի անդամակցությունը դադարեցնելու և որպես աուդիտոր անդամակցելու, Պալատի ֆիզիկական անձ անդամների անդամակցությունը դադարեցնելու, Պալատին անդամակցելու համար դիմած 2 իրավաբանական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի անդամ աուդիտորական կազմակերպության նկատմամբ ԿՊՄ կիրառելու մասին որոշումները:

**31.03.2026թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 6 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի անդամի անդամակցությունը դադարեցնելու մասին որոշումները: Քննարկվեցին նաև Պալատի անդամների ՇՄԶ կարգի լրացման, Արտաքին գնահատման գործընթացում մասնագիտացված կառույցի ներգրավվածության մեխանիզմի, Պալատի կողմից իրականացվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման գործընթացում փաստաթղթերի հավաքագրման, փոխանցման և պահպանման կարգի վերաբերյալ հարցերը:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

### Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 3 նիստ՝ 05.03.2026թ.-ին, 17.03.2026թ.-ին և 26.03.2026թ.-ին, որոնցում ընդհանուր թվով աուդիտորի որակավորում է շնորհվել 5 անձի, փորձագետ հաշվապահի որակավորում՝ 11 անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

### Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 3 նիստ 02.03.2026թ.-ին, 21.03.2026թ.-ին և 24.03.2026թ.-ին, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 12 ֆիզիկական անձանց և 2 աուդիտորական կազմակերպության («ԹիՎիԷս Ընդ Փարթներս Խորհրդատվական Խումբ» ՓԲԸ և «ԷԿՈՆՈՄԻԿՍ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ) անդամակցությունը Պալատին:

# ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

**04.03.2026թ.-ին** տեղի է ունեցել «Կրիպտոակտիվներով ծառայությունների կարգավորումը ՀՀ-ում » թեմայով դասընթացը: Այն վարում էր **Վիգեն Շահնազարյանը:**

**12.03.2026թ.-ին** տեղի է ունեցել «Ավելացված արժեքի հարկ. Հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ասանեթ Ալոյանը:**




**13.03.2026թ.-ին** տեղի է ունեցել «ՀՀ հարկային օրենսգրքի և կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի շրջանակներում ոչ ռեզիդենտի շահութահարկով հարկման ընթացակարգերը և հիմնական հարցերի ու խնդիրների քննարկում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Հովհաննես Յանիկյանը:**




**16.03.2026թ.-ին** տեղի է ունեցել «Թեմատիկ հարկային ստուգումներ» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Պետիկ Մկրտչյանը:**



**20.03.2026թ.-ին** տեղի է ունեցել «Շահութահարկ, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Գոհար Օհանյանը:**




# Պալատի որակավորման դասընթացների մեկնարկ

**2026 թվականի մարտի 24-ից** Պալատի գրասենյակում (Մոնթե Մելքոնյան 46/2 հասցեում) տրվեց Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի հերթական դասընթացների մեկնարկը: Դիմորդների մասնակցության՝ վերջին տարիներին արձանագրված և շարունակաբար աճող բարձր ցուցանիշը վկայում է մասնագիտական ոլորտում առավել խորը գիտելիքներով և հմտություններով զինվելու, ժամանակի թելադրած պահանջներին և միջազգային չափանիշներին համահունչ քայլելու և դրանով իսկ մասնագիտական առաջընթացի և հաջողության կայուն երաշխիքներ ապահովելու դիմորդների անշեղ ձգտման և Պալատի կողմից դրան տրվող համարժեք արձագանքի մասին: Պալատի բարձր որակավորում ունեցող մասնագետների աջակցությամբ նրանց նպատակները կդառնան առավել հասանելի և իրական, իսկ անցնելիք ճանապարհը՝ ավելի դյուրին:

**Լավագույն մասնագետները՝ մեկ հարթակում**

Այս խորագրի ներքո ներկայացվել են Պալատի որակավորման ծրագրի դասընթացների դասախոսները: